Հաստատում եմ

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան

«01» 09 2009թ.

ՀՀ ԿԳ նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի

ծնողական խորհրդի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ

1. Ծնողական խորհուրդը ստեղծվում է հաստատության գործունեությանն աջակցելու, ծնողների և հաստատության միջև համագործակցություն ապահովելու նպատակով:
2. Ծնողական խորհուրդը՝

ա/ իր կազմից առաջադրում է հաստատության խորհրդի անդամության թեկնածու՝ ըստ հաստատության կանոնադրության,

բ/ ամրապնդում է ծնողների և հաստատության միջև կապերը, մանկավարժական կոլեկտիվի և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցում ձևավորում էմիասնական պահանջներ,

գ/ ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներում,

դ/ օգնում է հաստատությանը սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու հարցում,

ե/ մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում հաստատության ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների,

զ/ մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու գործին,

է/ աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների կոլեկտիվ հանգստի, ժամանցի կազմակերպմանը,

ը/ ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը հաստատությունում,

թ/ ապահովում է ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ:

Ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպումը

1. Կուրսերի ծնողական խորհուրդներն ընտրվում են կուրսի ընդհանուր ժողովի կողմից մեկ ուստարվա համար՝ նախագահի և 2-4 անդամի կազմով:

4. Հաստատության ծնողական խորհուրդներն իրենց որոշումներն ընդունում են իրենց թվակազմի կեսից ավելիի ներկայությամբ:

6. Ծնողական խորհուրդը իր աշխատանքների մասին հաշվետվություն է տալիս խորհրդի կազմի վերընտրության ժամանակ:

8. Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի և ընդհանուր ժողովների արձանագրությունները:

9. Հաստատության ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

10. Հաստատության ծնողական խորհուրդը համագործակցում է հաստատության մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

Ծնողական խորհրդի իրավասությունները

1. Հաստատության ծնողական խորհուրդը իրավասու է.

ա/ հաստատության տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների մեջ թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ,

բ/ մասնակցել հաստատության վճարովի ծառայությունների կազմակերպման, պայմանագրերի կնքման և արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին,

գ/ հանրակրթական դպրոցի կանոնադրության պահանջների խախտման դեպքում դիմել տնօրենին, անհրաժեշտության դեպքում՝ վերադասին),

դ/ լսել գործադիր տնօրենի հաղորդումը հաստատության գործունեության վիճակի ու հեռանկարների մասին, ստանալ նրանից ծնողներին հետաքրքրող պարզաբանումներ:

1. Վ. Սարգսյան
2. Ռ. Ադյաջյան
3. Ռ. Ջաբրյան
4. Ս. Մարտիրոսյան
5. Մ. Սողոմոնյան
6. Ռ. Բաղդասարյան